

## ԵՄ ՆԿԱՏՈՂ ՈՒԹԵԻՆՆԵՐԸ

Ա Լ Ե Գ Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Լ Ի Բ Ց Պ Ե Ր Ա

b.

Արգինայից դուրս գալով՝ դեռ մի վերստ հազիւ էինք անցել, մտանք վերև յիշած խորածորի նեղ կրծի մէջ, Խորածորի մէջ սկզբում զգացի մի տեսակ բաւականութիւն աշխարքը եղրափակուած տեսնելով ձորի ափունքով. և երկնքի հօրիզոնը սահմանափակած ձորափների գծով. բայց այդ բաւականութիւնը շուտով անբաւականութեան փոխուեց, և սկսայ ձանձրանալ, ձանապարհը դետի ձախ ափովն է տարած ջրին շատ մօտ, որ՝ ի պահանջել հարկին, ձանապարհորդը կարողանայ ջաւը առնել դետից. Գետի աջ ափին բարձրացող բնութեան ձարտարապետած սեպ ժայռապարիսպը անարատ մնումէ, ուր տեղ տեղ անձաւներ ու այրեր կան. բայց ձախ կողմինը՝ ոչ նոյնպէս. մարդու ձեռքը իւր օգտի համար աղաւաղել է բնութեան ձարտարապետութիւնը, ահարկու վսեմութիւնը նսեմացնելով ձանապարհի հարթավայրը պատրաստելու համար. Չորի ամայութիւնը ընդհատումեն տեղ տեղ երեացող կանաչապատ փոքրիկ փոսորակները, չեղասահ գետը և թռչունների թռթոռը, որոնք օդի փոքրիկ տարածութեան մէջ թիթեաների պէս են երեւում. Այդ խորածորը ժամ և կէսից աւելի է տեսում և անցորդը գեռ ձորից հազիւ դուրս եկած անցնումէ—ուստ տաճկական պատերազմից յետոյ շինած մի ամուր վայելչաշէն կամբջով, որ ձգուած է գետի վերայ. Անմիջապէս աչքի առաջ տարածումէ Ծահնալար կոչուած զիւղը, զետի մի փոսորակ հօգտի մէջ, կամբջից կէս վերստ հազիւ հեռաւորութեամբ դէպ ի արեմուտը:

Ըահեալարում այժմ մալականներ են բնակում, զիւղի առաջ, գետի ափին, յցները բանջարանոց և վարունգի մարգեր էին ձգել, որից բաւական օգուտ են քաղում, տեղացի մալականները հաւարածութեամբ են պարապում, սայլապանութեամբ և շատ ստիշաւ երկրագործութեամբ. իսկ արդաւածնդ հողը, գեղեցիկ զիլքը, ջրաշատ գոգաւոր հոգիտը, ժրաջան երկրագործին հրապուրում և նորա նախանձը շարժում, որ մի խումբ մալականներ գրաւելով, չեն մշակագործում ինչպէս պէտք:

Ըահնալարում կայ մի վայելչաշէն պանդոկ՝ Ալեքսանդրապոլցի մի քանի երիտասարդների սեպականութիւնու ոռոնք այժմ էլ կառավա-

բումեն՝ յիշեալ պանդոկը, ուր ճանապարհորդները և շրջակայ գիւղացիք կեանքի մի քանի անըրաժեշտ պիտոյք կարողանումն ձեռք բերել Բարի պանդոկապետները մինչեւ անգամ եկեղեցու հոգս էլ են քաշում որովհետեւ սենեակում, ուր մենք տեղաւորուեցինք վերագարձին, մանր սպիտակ և գեղին մեղրամոմի թափթափուկներ կային և մի պուրակ էլ (գաստայ) սեղանի վերայ զրուած էր. Բարի պանդոկապետը եթէ կըրկնապատիկ գնով էլ վաճառի իւր մթերքը՝ ճանապարհորդը և զիւղացին առանց նայելու պատրաստ են մեծ բաւականութեամբ վճարել և գնել միոյն թէ ինդրածը լինի.

Ճահնալարը իւր տեղադրութեամբ ամենապատուական գիւղ է, որի հարաւային կողմից մի վառակ և հիւսիսային արևմտեան կողմից Պարսայը միանալով միանալով իրար, գիւղին եռանկիւնաձև մի թեքակզզու կերպարանք են տալիս. Այդ գիւղում կան և մի քանի աչք ջրաղացներ.

Ճահնալարը Հ. Ալիշան հայարնակ գիւղ է համարում (1), բայց ճանապարհի վերայ եղած Ճահնալարում բնաւ հայ չկայ, միայն մաշկանները իրանց խայտարդէտ ամառնային հագուստով և գլխարկով աչքի են ընկնում, և որոնց օրօրոցաձև տները շինուած են գետի ափին.

Ճահնալարից արդէն Պարս տանող ճանապարհը երկու է գառնում, մինը փոստի խճուղին, որ գետի ափովն է տարած, միջնաբերդի հիւսիսային արևմտեան կողմից պտտելով մտնումէ քաղաք. իսկ միւսը, որ հին ճանապարհն է, Փալլբրուան գիւղով և Մշկոներ կոչուած հանդրուաններով հարաւային կողմը թողնելով Խահնիլար բլրակները արեւելեան կողմից է մտնում քաղաք. Մենք, որովհետեւ փոստի կառքով չենք ուղեարում, ընտրեցինք վերջին ճանապարհը կարծ ու կարուկ և և պատերազմական տեղերին մօտիկ լինելու աղացաւ.

Ճահնալարից յետոյ ճանապարհի վերայ առաջին գիւղն է Փալլբրուան մի ժամու կամ եօթն վերստի հեռաւորութեամբ, թէ գիւղը և թէ իւր շրջակայքը հարուստ են առաջին և վերջին արեւելեան պատերազմների հետքերով ու յիշատակներով Մի տեղ մի խաչ քար յիշեցնումէ մի ճակատամարտի առաջարկը, մի այլ տեղ յիշեցնումէ՝ որ կայսերական ընտանիքի մի անդամի կեանքը այդտեղ վտանգի է ենթարկուել. միւս տեղ՝ յիշեցնումէ որ մի խումբ սպաներ իրանց հետ կենսազրաւ զիւրաների հետ այդտեղ են հանգչում.

Փալլբրուանից գեպի հարաւ գտնվումէ Քիւրակգարա կոչուած գիւղը և բլրակը, ուր բանակեցին առաջին և վերջին արեւելեան պատերազմների ժամանակ Ռուսաց զօրքերը Ար 1854 թուին Օգոստոսի 6ին Ռուսաց զօրքերը ընդ հրամանատարութեամբ հայազի զօրապետ Բէրուտեանի ճակատելով Տաճկաց բանակի հետ, որ կրկնապատիկ շատ էր թուով,

Նկուն արին նոցաւ Այդ սարսափելի պատերազմը տեղի անունով կոչուեց Քիւրակ դարայի պատերազմ՝ )։

Փալքրուանից գէպի Ա.արս տանող ճանապարհից գէպի հարաւ տարածվումն կանաչագարդ բլրակներ և սարադաշտեր, որոնք գեռ իրանց վերայ կրելով պատերազմական կէտերի հետքերը և հողաթումբերը, զրաւումն ճանապարհորդի ուշազրութիւնը։ Դէպի ի հարաւ, իրեւ հսկայ, բարձրացած է Ալաջայ կամ Արջոյ առիջ լեռը, որին գէպի հիւսիսի իրեւ թերե թերե կամ ոստեր ալէձև բարձրացնումն զրեթէ աղխաղուածիմ նկարագրած բլրակները արեւելեան և արեւմտեան ուղղութեամբ, և գոգաձեւ մի գաշտավոյր են կազմում, որի հիւսիսային սահմանն է Ա.արսայ չայը և Զ.արիշատու միջակ բարձրութեամբ կապտատեսիլ լեռների շղթան։ Ալաջայի առաջ խոնարհուող բլրակները, որոնց մասին խօսեցի, արեւելեան թերին պատկանողները կրումն Ա.արայեազ, Ա.արս—զուզու և Ա.զլ թափա անունները, որոնք Թուսաց մարտատեղիներն էին. իսկ արեւմտեան թերին պատկանողները կրումն Աւլիս, մեծ Եահնի և փոքր Եահնի անունները, Արեւելեան թերը իրամատուելով Ա.արսաչայի հոսանքի կրծով՝ շարունակվումէ մինչև 2լդըրի և Զ.արիշատի լեռները. բայց միշտ խոնարհ կոհակաձեւ գարեք կազմելով. իսկ արեւմտեանը՝ վերջանումէ փոքր Եահնի բլրազ և ճանապարհի անցքով, Այդ արեւմտեան սարաւանցները իրանց հովանաւորող Ալաջայով՝ էին Տաճկաց բանակատեղին և մարտատեղիները 1877—78 թուերի պատերազմին, Տաճկացը՝ ընդ զօրավարութեամբ Մուխթար փաշայի, որ իւր վրանը և բուն բանակը զրել է Ալաջայի դօշին. իսկ Թուսացը՝ ընդ զօրավարութեամբ հայազգի զօրապետ Մ. Լորիս — Մելիքեանի, որի բուն բանակը Քիւրակ — Վարայի հովտումն էր։

Բայց ես դառնամ Առւղեգութեանու

Փալքրուան գիւղը հայաբնակ է, բնակելչները զանազան չարուբարի տեսած լինելով պատերազմի երեսից, և զանազան լաւ ու փատ մարդոց հետ յարաբերութիւն ունենալով պատերազմի, և գիւղի միջով անցնող ճանապարհի շնորհիւ ընչափաղց և լոգիրը (գորանից մեզմ բառ չկարողացայ գտնել նոցա բնութեան որպիսութիւնը յայտնելու համար) են դարձել ճակաճանութիւնը թափվումէ աչքներից ու երեսներից։ Բայց հայերը ինչ և լինին, նեղ բոպէներում գիմումն Աստուծոյ ողորմութեանը, այնպէս որ մեր՝ գիւղը մտնելիս, մեծ մեծ պղինձներով՝ զեղից գուրս մի առուակի կանաչուտ եզերբում մատաղ էին եփում։ Մենք իջևանեցինք գիւղի արևմտեան անկիւնում մի Շառանէ մէջ, որի բարի Շառանէ ձեռքից եկած բոլոր հիւրասիրութեան ցոյցերը չըխնայեց. հաղար շնորհակալութիւն Աթէ մի բաժակ սառը ջուր խմացնողը

Եիսուսի աշակերտի վարձ պէտքէ ընդունի, ապա և բարի խանութպանը րիւրապատիկ վարձուց արժանի է, վասն զի բաց սրտով մեզ ընդունեց և մենք յօժարակամ՝ հիւրասիրութիւն տեսնելով հանգստացանք և միջոց ունեցանք հեռագիտակով մեր (գիւղի շուրջը) եղած պատերազմական տեղերը դիտելու. Մինչ այս մինչ այն, երեի մատաղի կերակուրը հասել էր որ Եկեղեցական պաշտօնեալքը մի խումբ մարդոց հետ սկսեցին Եկեղեցական թափօրը, շրջապատելով մի սպիտակ սաւանով ծածկած սեղանի, որի վերայ դրուած էին եկեղեցական սրբութիւններն Թափօրը վերջանալուց յետոյ բոլորը ծունկի դալով սկսան (երկի) Տէր ողորեա ասել. Ո՞քան սրտաշարժ էր տեսարանը, բայց ևս բազդ չունեցայ մասնակցիլ այդ հոգեոր հանդիսին, որ ինձանից մօտ կատարվումէր. մենք չկարողացանք մասնակցել և մատաղին, երեի կամ մեր դուքանում իջևանելը չէր իմացել մատաղ անողը և կամ սովորութիւն չ'ունին օտարականին մատաղի բաժին տալ, այն ինչ մեր հիւրընկալ խանութպանին բաժին ուղարկեցին:

Ճանապարհի վերայ եղած գիւղերում գուքանները մի մի տեսակ պանդոկներ են, և ճանապարհորդը կամայ ակամայ այդ տեղ պէտք իշեանի, ինչ կարդի մարդ ել որ լինի. այդպէս ել մեզ պատահեց, Կըրե նկատողութիւն կ'ասեմ որ թէ գուքանի շենքը և թէ միջի մթերքը շատ խեղճ բաներ եին. կարելի եր մի քիչ ձև տալ շինութեան և շատացնել վաճառքի տեսակները.

g.

ՓալԵրուանից մինչև Ղարս Ճանապարհի վերայ գիւղ չկայ բացի Թա-  
հարլուեցւոց եայլից (Հանգրուան). որ գտնվումէ Մշհեր կոչուած տա-  
րածութեան վերայ մի Ճահճային լճակի հիւսիսային ափում. այդ լճա-  
կի հարաւային ափում Թահարլիցւոց եայլից մի վերստ հեռաւորու-  
թեամբ հանդիպահայեաց գտնվումէ Բայինդուրցւոց և Ղարաքիլիսեցւոց  
եայլիւն:

Մշկոներ թերեւս Անւոյ ձորամիջի Լուսաւորիչ եկեղեցու ԱԿԴ թուրին գրուած արձանագրութեան մէջ յիշուած հշտականեցը ( ), իսկ ճահճապին լճակը, նոյն արձանագրութեան մէջ շահագուշակը լին:

Մշկոները գտնվումէ Եահնիլար բլրակներից դեպի արևելք, Ալաջալից դեպի հյուսիս, և կարծեմ Խաթռուն օղլի բէկերի կալուածքն է:

բածութիւն ունի, և Փալքրաւանից մինչեւ Վարս, Եղաջպէից մինչեւ Զարիշատու լեռները զիւզիր չեն երեսում, Ընդարձակ դաշտեր ու հովիաներ մօտ 20 քառակուսի վերստ պարագ մնացել են և Յուլիսի 15ին պահինըն ամսան ամենասաստիկ շոկ եղանակին — ոյդ դաշտերը ծածկաւծ էին կանաչ խոտագի թէպէտ Մայիսը վաղուց անցել էր, բայց գոյն դոյն ծաղիկները խոտերի միջից վեր բարձրացած՝ ցոյց էին տալիս իրանց գեղեցիկ բազմաթերթ պատկը ։ յոյզ ընդարձակ տարածութիւնը անմարդաբնակ է գուցե այն պատճառով, որ աղբիւր ըրկայ:

Ենչպէս յիշեցի, ճահնային լճակի հիւսիսային ափին ճանապարհի մօտ գտնվումէ Պահարլեցւոց հանգրուանը (եայլայ), իսկ այդ հանգրուանը մի հին գեղատեղի է, որի Ակեղեցու աւերակը դեռ նշմարելի է և գերեզմանաբարերը գեռ երեսւմնեւ։ Աստուած որ այդ գեղեցիկ դաշտավայրը ստեղծել է, չէր կամենալ որ բոլորովին անմարդաբնակ մնար ջրի չգոյութեան պատճառով։ Մարդկային հանճարը եթէ ջրի համար հոգայ, և ձեռքը ջուր ունենալու համար գործէ, Աստուած անպատճառ ջուր կըտայ, «որ հայցէ գտնէ»։ Աստուած Նորայէլացիներին Արարիայի արեակէղ անապատի մէջ պատճառից ջուր բղխեցրեց։ միթէ կղլանայ կանաչազարդ հօփումն լեռնադաշտակի մէջ ջուր տալ Քայլ մարդ է, որ գործէ զերկիր։ իսկ մարդ չըկատ։ Պահարլեցւոց եայլէն յիշելով հարկ եմ համարում մի քանի կարեօր տեղեկութիւն տալ.

Պահարլին Ելէքսանդրապօլի գաւառի մէջ Նորիաչպէյի ձախ ափի վերայ շինած մի զիւզ է, քաղաքից 7 վերստ հեռաւորութեամբ։ Պահարլիից մինչեւ իրանց այժմեան հանգրուանը (եայլէն), առ նուազն 6 ժամու ճանապարհ է։ և Պահարլեցին այդքան ճանապարհը կաթելով, իւր անասունների անգեաններով, ձիերի ջոլիրներով, ոչխարների ու այծերի հօտերով, գառների և ուլերի յօրաններով, կահ կարասիրով չուռմէ Մշկոներ կոչուած տեղը ամառը անցկացնելու համար, և մօտ 300 ր. էլ փող է վճարում իրբեւ գետնահարկ Շօրագետի գաւառական վարչութեան, որ հասցնի կալուածատիրաջր։ բայց ինչի՞ են Պահարլեցիք այդքան գժուարութիւնները կրելուց յիտու գեռ փող էլ վճարելով գոլիս Մշկոներ կոշուած հանգրուանը։ Ահա ինչի.

Երեկեան Շիրակը կամ Արփաչայի ձախակողմեան Շիրակը 1830 թուականից առաջ զբեթէ անմարդաբնակ էր։ 1830 թուականներին, երբ որ պատերազմից յետոյ Խուսները Վարսը թողնելով յետ ուեար է զառնային, ըստ ներքին համաձայնութեան պատերազմով տէրութեանց ցանկացող հայերը թէ Երզրումից և թէ Վարսից գաղթեցին Խուսաց համապետ Խպիսկոպոսը, որ իւր ժողովուրդը բնակեցրեց Ախալցիայ և Ախալքալաք քաղաքներում, իսկ այդ երկու քաղաքների շրջակայքը լցրեց Երզրումի վիլայեթի հայ ժողովրդով։ Վարսի գաղթականութեան պարագլուիր, Վարսի առաջնորդ Զախարիա (Խաժակնեան) Ստեփան

եպիսկոպոսն էր, որ իւր ժողովրդին բնակեցրեց Գիւմրի աւանում, զիւլտցիներին էլ արևելեան Շիրակայ գաշտի վերայց Գիւմրին, ըստ Ալիշանի (ի Շիրակ) կումայրին ի պատիւ Ալէքսանդրա կայսերուհետոյն կոչուց բերդի հետ Ալէքսանդրայուն, որով և արևելեան Շիրակը կոչուց Ալէքսանդրապոլու գաւառու Ալէքսանդրապոլի գաւառը իւր արգաւանդութեամբ հրապուրեց շատ գաղթականներին թող 1828—30 թուականների մեծ գաղթականութիւնը հետզիւտ ուրիշ տեղերից եկել յարել են նաև այլ հատուածներ, օրինակ, Արզրուցոց մի մասը, մի քանի զիւղերի գաղթականութիւններով և Յայազէացւոց մի մասը, նոյնպէս զիւղացի գաղթականներով շեմ յիշում մանր մունք հատուած եկածները Այսպէսով Ալէքսանդրապոլու գաւառը այնպէս խառցել է բնակութեամբ, որ ժողովուրդը ամեն դժուարութիւնն է առնում իւր ապրուստի համար։

Ալէքսանդրապոլու գաւառում զիւղերը այնպէս մօտ մօտ են շինուած և բնակիչքը այնքան են բազմացել, որ մինչեւ անգամ ձանապարհի համար բաց գետին չեն թողնում, հողը թէ վարուցանքի և թէ արօտատեղի լինելու չբաւականալով ժողովուրդը ինքն սովամահ չլինելու և անասուններին անօմի չըկոտորելու համար, բացի իրանց հաղաշարկը վճարելը, այդ հողերը մշակելու համար անասունների արօտատեղիի աղագաւ էլ հարկ է վճարում, որով կրկնապատկվումէ իւր տուրքը, որով կրկնապատկվումէ իւր թշուառութիւնը։ Փոքր ինչ զիւր գտնելու համար, աւելորդ անասունները տանումին հանգրաւանները, որպէս զի ամրող գաշտերը մշակեն, առանց արօտատեղերի հոգս քաշելու, Փողովուրդը, ինչպէս ասացի, բազմացել է, իսկ հողը նոյն մեալով և ամեն արի ցանուելով, կորցրել է արգաւանդութիւնը։ որ Ալէքսանդրապոլու գաւառային ամենամշուառ զրութեան մէջ է, այս իսկ է պատճառը։ որ քաղաքում առուտուր զրեթէ չըկայ, որովհետեւ զիւղացին մեծ նեղութեամբ հազիւ իւր օրապահիկը հայթայթելուց յետոյ այլ ես կարողութիւն չէ ունենում իւր բարեկեցութեան համար քաղաքից անհրաժեշտ պիտոյքներ գնելու, Այս հանգամանքից սահպուած Պահարեցիք եալլայ էին զուրս եկել Մշկոներ կոչուած հանդրուաններում։ Եւ ինչպէս լսեցի, շատ զիւղացիներ արևելեան Շիրակից հանդրուան են հաստատել արևմտեան Շիրակում յատուկ առուրք վճարելով։

Հ. Ալիշան Շիրակի սահմանը հասցնումէ մինչեւ Առաջնիլար բլրակը և Մշկոները թողնումէ Շիրակում։ Լսախս, Արզինայի արևմտեան կողմից զեզի հիւսիս երկարող սարերը, և հարաւից—Արբայեալից սկսած սինչեւ Ալաջա եղած լեռնաշղթան, որոնց մէջ են Պարայեալ, Աղբմափայ և Քամիկլար՝ բնական սահման պէտք է համարել հին Շիրակին, որով և Շահնալար պիւղից սկսած։ Փալրուան զիւղը և Մշկոները կը մնան Ա. ահանգ գաւառի մէջ։

1

አዲሱ የዚህ ደንብ በተመለከተው እና የዚህ ጥንብ የ

Մշկոներից մինչև Վարս երկու ժամու ճանապարհ է, և Խաչնիի զառի վայրը գեռ չ'իջած երեսումէ մեղ Վարսը լեռների ստորոտում:

Արքան մօտեցանք Պարսին, Պարսը մեր աչքում՝ փոքրանակ սկսաւ։ Ե իմ ևնթագրութեան բոլորովին հակառակ դուրս եկաւ, Պարսի անապիկ լինելու պատմութիւնը լսելով, ես կաթօռ մէի թէ այդ քաղաքը շենուած կլինի սարի գոշին և մի կիրճ պէտք է ունենայ ճանապարհի համար։ Իսկ այդ կիրճը պահպանուած կը լինի անառիկ ամրոցներով ու մարտկոցներով։ Բայց հակառակ իմ ակնկալութեանց, Պարսը մի տափարակ ցած գաշտավայրի սպառուածքի անկիւնումն է, որի քամակին բարձրանումն միջակ բարձրութեամբ լիսներ, և դոցա վերայ շինուած են բերդից ամրագոյն և աշուելի մարտկոցները։ Այդ ամրոցներից մինը գաշտի վերայ է քաղաքի հարաւակողմը, որով քաղաքը շրջապատած է մարտկոցներով (1), որոնք միմեանցից մի վերստ հազի։ Հեռաւորութիւն ունենան։

Առաւոտը 6-րդ ժամին Ալէքսանդրապոլից գուրս գալով ճաշու 3/<sup>1</sup>, ժամին մենք արդէն Պարսի մօտ էինք և Պարագաղ մարտկոցը մեր աջ կողմը թուղնելով՝ պէտք է մանեինք քաղաք. բայց մեր ուշադրութիւնը զրաւեց խառնամբում մի բազմութիւն, ճիշտ այնպէս՝ որպիսի եր Խորա-յէլացւոց բանակը Խզիպտոսից գուրս գալուց և Կարմիր ծովը անցնե-լուց յետոց. Այր և կին, ծեր ու պառաւ, տղայ և աղջիկ խառն ի խո-որն իւրեանց անասունների հետ տան կահ կարասիք սայլերի վերայ բարձած բանակել էին Պարսի մօտ, քաղաքից դեպի արևելահարա-գտնուած կանաչուած գաշտի վերայ. Խոշոր գամբուները հսկում էին այդ բանակին. Ով էին զօրա, Տաճիկ գիւղացիներ, որոնք չըկամենալով ոտարի հպատակութեան տակ մնալ թողնուածէին իրանց բնակավայրը և շեսանում. Նորա գնումէին Տաճկաստան:

Մեր կտեր թողնելով այդ բանակը անզէն ժարդեանց՝ մհնք թուրքաց գերեզմանատան ձօտից անցնելով, մի քանի արբունի տաճիկ շենքեր մեր աջ ու ձախ կողմբ թողնելով՝ մտնեք քաղաք և խառն ի խռուն

1) Այս տեսակի մարտկոցները բառ Գաղթականու տառակերկու համար են Տես Փառձ  
1879, թ. V, Մայիս, էպիս. 191:

ցանցաձեւ այս և այն կողմ տարածուող փողոցներով, որոնց չունեն առունը դեռ շատ է, անցնելով՝ կանգնեցինք մի մարզաշատ փողոցի մէջ, որ վաճառուց հրապարակն է Եղել։ Կ'նչ խորդ ու բորդ լարիւրինթառներ, ինչ նեղ նեղ բաւիղներ, Տէր Աստուած, և գոքա փողոց անուն են կրում։ Ա, երջապէս հարց ու փորձ անելով գտանք մի ուղեցոյց, որ մեզ ցոյց տուեց այն տունը, որ մենք իջևանելու էինք։

**Վարսր.** Տաճկաց սահմանագլխի երեկի պահնակն եր։ Ա, յնտեղ՝ ուր կենզրոնանումէք Տաճկաց զօրութիւնը, այնտեղ՝ ուր նստումէք գաւառակի կառավարիչը։ Երթեւեկի զիւրութեան համար ոչ մի կանոնաւոր փողոց չըկայ, ոչ մի կարգին հրապարակ չըկայ։

**Ա, երջապէս մենք իջևանեցինք Բայինդուրցի բարեկրօն Մելքիսեդէկ քահանայի տունը, որին կանխապէս յայտնաւմեմ իմ և ուղեկից ըն կերներիս շնորհակալութիւնը նորա արած հիւրասիրութեան և հազորդած մանրամասն տեղեկութեան համար։ Մեր իջած ժամին, Տէր Հայր տանը չէք, բայց նորա ծերունի հայրը զբաղեցրեց զանազան խօսակցութեամբ բաւական ժամանակ։ Այդ խօսակցութեանց նիւթն էր ընդհանրապէս Բայինդուր զիւրուր որ իրեկ իւր ընակամայր՝ բնաւ չէք մասնում ծերունին և փափագանոք յիշումքը։ Ծերունին հոգումէք Եկեղեցու պայծառութեան, ժողովրդոց խաղաղութեան ու բարեկեցութեան համար։ Մի և կէս ժամ՝ այսպէս հանգստանալուց յիսոյ, գուրս եկանք տանից քաղաքում շրջելու, մեր հարցատիրութեան բաւականութիւն տալու համար։ Մեր իջևանած տան հանգէպ, նահանգապետի տան առաջ ուղի բաց անելու համար՝ աշխատումէին մի քանի, կարծեմ, բանտարկեալներ, և նորք չարչարժումէին ձիթիհանքի մի մեծքար տեղից գուրս հանելու համար։ արզարե տաժանելի տանջանք՝ Մեր իջևանած տանից շատ սակաւ հեռաւորութեամբ գտնվումէ Ա, արսայ չայի լայն ձորի ափը։ Չորի մէջով անցնաւմէ հեղասահ զետք լուսու մանջ, կարծես բնաւ չէ շարժում։ Մենք մի նեղ քարքարոս ծուռն փողոցով իջանք զետի ափը, որտեղից տարած է զետի Սարի - զամիշ և Ապղուան ձգուող խճուզին։ Միայն այդ տեղ, ձանապարհի վերայ և զած աների առաջ անտաշ քարերից մայթեր կային։ Խճուզով մենք զետի քաղաքի կենդրոնը ուզդուեցինք և մի փոքրիկ հրապարակով որ ի պատիւ Առվիասու կառավարչապետի տաշազ ծածկուած էր և մի փայտէ կամրջով, որ ձգուած է դետի մի ճիւզի վերայ, անցնելով՝ մը տանք հասարակաց պարտէզը, կամ Պարսեցոց ասելով — Ասու, որ Էստուած պարտէզ կամ առ համարի։ Մի քանի ձիւզեր տնկած են գետի մի կղզու վերայ, զրոսնելու համար ուղիներ թողուած են, իսկ ընդհանրապէս խոտանեցի կարելի է համարել։ Պարտիզում զետեղուած են մի քանի քարեր, որոնք ինչպէս լսեցի համայդ Պ. Ալեքսանդր Երիցեանն է զետեղել իրեկ Երտաշէս Բ. Երշակունի թագուորի հաստատած սահ-**

մանաքարեր + ), Քստիս, այդքարերը շատ հին չպէտքէ լինին, և սահմանաքարի ոչինչ կերպարանք չ'ունին

Պարսկ շինած է գետի երկու ափերին, որոնք չետղչհաէ բարձրանալով ամրիթէատրոնի ձև են տալիս քաղաքին:

Տները շինուած են ասիական ճաշակով, փոքր և նեղ ցանցաձեւ փայտեայ վանդակով պատած լուսամուտներով, որոնք յատկապէս շինուած են կանանցների համար։ Տները պարտէզ և բագ չունին, ուշչէ (փողոց) անմիջապես կարելի է մտնել տան բակու (նրբանցք)։ Քուչի վերայ դռները եթէ բաց լինին, անցորդները տնային բոլոր աշխատանքը կարող են նկատել, մանաւանդ ամառ ժամանակ՝ երբ տանըցիք սօխախում նստած տնային գործով են պարապում, կար ու կտուր անում, թել մանում, հիւսում և լուացք անում, որի սապնաջուրը ուղղակի փողոցի վերայ են ածում։ Գոնէ եօ այդպէս տեսայ, իմ կարճ զրոսանքի կամ լաւ եօ զննութեան ժամանակ։ Վերագառնալով տուն մի ուրիշ նոյնպիսի քարուտ փողոցով, որ ձիշտ Աշտարակի նեղ քուչերանց պատկերն է կրում։ այն առաւելութեամբ որ Վարսինը աւելի զառ ի վայր է, կեդտոտ և աւելի խոշոր քարերով ծածկուած։

Տուն հասնելուց յետոյ մինչ այս մինչ այն, եկաւ Մելքիսեդեկ քահանան, իւր ուշանալու պատճառը յայտնելով, որ էր գլորոցների համար խորհրդակցութիւնը վարժապետների հետ։ Հետ զհետէ խօսակցութիւնը շարունակուելով հասաւ այն կէտին, որ միայն Արարտին է վերաբերում, որի աղջիցութեան տակ ես մատգրուեցի հետեւեալ օրը շարունակել մեր զբօսանքը կամ զննութիւնները, իմ ստացած տեղեկութեանց նայելով և տեսածիս ստուգութեամբ ենթագրելով՝ պատերազմից առաջ քաղաքում շատ սակաւ հայեր են եղել զետի աջ ափին բնակութիւն հաստատած, որ հին բերդաքաղաքից դէպի արևմուտք է ընկնում։ Հայերի բնակավայրը՝ ուր են առաջնորդարանը՝ եկեղեցին և հայ գլորոցները, զրուած է միջնաբերդի, հին բերդաքաղաքի և զետի մէջ տեղ, և ձնշուած զրութիւն է ներկայացնում։ Այդ թաղը կոչվումէ ժամու մահլայ, սկսվումէ միջնաբերդի ապառաժեայ ոտքից և վերջանումէ, ինչպէս ասացի, զետով և արեւելեան կոզմից բերդաքաղաքի պարսպով։ Այդ բերդաքաղաքը, որ այժմ Արարտ մի թագն է, հին հայկական նորուն է, ամուր կրաշաղաղ պարիսպներով շրջապատած Անի քաղաքի ձևով, միայն այն զանազանութեամբ, որ Արարտ կապոյտ ժեռ (ժայռ) քարից է շինուած և Անոյ պարսպի շինութեան նրութիւնը չունի, քարերը լաւ չդիմած չեն։ Մենք այդ բերդաքաղաքի երկու գոները տեսանք, արևմտեան՝ որի երկաթապատ մի փեղկը գոյմ քնիած էր։ և տեղացւոց պատմութեան նայելով Բերուղովի պատերազմի ժամանակից հետէ և զիռ ընկած մնումէ։ Այդ զրան ճակատը արտաքին մի

(1) Ապօռ է սրամինի հայութեան առաջուցակները:

փառասիրութիւն չ'ունի և զրուագներ էլ չըկան, այն ինչ հարաւային զրան ճակատը գեղեցիկ քանդակներով զարդարած է, Այդ զրան մաս երեւմէ մի արձանագրութիւն հայերէն, կարծեմ արաբացի տառերով արձանագրութիւն էլ կար, ես միջոց և յարմարութիւն ըլդտայ արձանագրիրը վերծանելու ։ Հ. Կիւրեղ այս զրան քանդակներն ու ծաղկի նկարները աւելի հին է համարում քան պարսպի շինութիւնը, իսկ արձանագրին զալով՝ ասումէ, « այստեղ (զրան զրսի կողմը) հայկական քանդակներու հետ միասին կ'երեի և արձանագրի մի փոքր մասն պահող քար մի, որ զրուած է անշուշտ քանդակաց թերին լեցնելու համար, որոյ ընթերցմանքէն մի ամրող խօսք չըհարկցուիր » ։ Քաջրերունին իւր Ալեքսանդրապոլից Պարս ճանապարհորդական նկատողութեան մէջ մանրամասն յիշելով Պարսի տները, դպրոցի մօտաւոր անցեալը, աշակերտների ձեռքով հրատարակուած օրագիրը ևլն. 2) ոչինչ չէ խօսում բերդապարսպի մասին, զուցէ շարունակութիւնը պարունակում լինէր իւր մէջ այդ մասին տեղեկութիւններ, բայց զժբաղար, չէ շարունակուել Իմնկատողութեամբ այդ զրան ճակատի քանդակներն ու զրուագները ոչինչ ներգաշնակութիւն չեն կազմում, ըստ իս, դրան ճակատը քանդուելուց յետոյ ձեռք ընկած զրուագաւոր քանդակագործ քարերը իրբե շինութեան հասարակ քար գործ են ածել ինչ և իցէ։

( Եպահանգելէ ) .

Յ. Ա. Մ.

### ԲԵՐՅԱԾՈԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Քարոյակը թութեան նպատակը պիտի լինի այն, որ կրթուողի հոգւոյ մէջ արմատանան բարի և ազնիւ զգացմանց հապկումները, իսկ միւս կողմից հակառակ զիպուածումը կրթուողը ճանաչէ կամ թէ չէ՝ որոշէ անախորժ զգացմունքների, ամօթխածութեան, խղճի և իսյումների աստիճանները։

ա) Քարոյականութեան պահանջմունքները, որոնք պիտի բղիսեն սանիկի հոգուց՝ ի հարկէ սկիզբն է առնում Փրկչի ուսումից (աւետարանական խօսքերից): Փրկչի խօսքերն են « Սիրի՛ր քո Տիրոջ Աստուծուն և քո բարեկամներին այնպէս՝ ինչպէս քեզ» « Եղի՛ր կատարեալ այնպէս՝ ինչպէս քո Երկնաւոր Հայրը կատարեալ է»: Աւեմն սանիկը անշուշտ պէտք է ունենայ մի անսպառ աղբիւր, որտեղից բղիսեն բոլոր մասնաւոր բարուակրթական պահանջմունքները։